ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2023/83

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2023 թ. N 83

ԵՐԵՎԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ»ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 40

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2023թ. ապրիլի 14-ին քննարկեց Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի (այսուհետ՝ հաստատություն, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	01 մարտի 2022 թ.
ինքնավերլուծության ներկայացում	17 հունիսի 2022 թ.
փորձագիտական այցի իրականացում	12-15 սեպտեմբերի 2022 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	05 դեկտեմբերի 2022 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	13 հունվարի 2023թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 4-ը՝ «Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Ենթակառուցվածք և ռեսուրսներ» և «Որակի ներքին ապահովման համակարգ» գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Առկա են որոշակի խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առկա են նաև առաջխաղացման միտումներ և օրինակներ**

ՄԿԾ-ները համահունչ են քոլեջի անվանմանն ու որդեգրած առաքելությանը, ինչպես նաև ՀՀ տնտեսական զարգացման միտումներին ու աշխատաշուկայի պահանջներին, ինչի արդյունքում ուսանողների թվաքանակը տարեցտարի ավելացել է:

Քոլեջում իրականացվում են սպասարկման և տեխնոլոգիական մասնագիտություններ: Առկա է դուալ մասնագիտություն, որին մասնակցություն ունեն նաև գործատուները: Դրան զուգահեռ, կան նաև մասնագիտություններ, որոնց իրականացմանը գործատուներն մասնակցություն չեն ունեցել, կան մոդուլներ, որոնց մուտքային պահանջները բացակայում են կամ չեն համապատասխանում ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Թեև քոլեջում մշակվել և կիրառվում են դասավանդման և ուսումնառության մոտեցումներ, այդուհանդերձ, դրանց արդյունավետությունը չի գնահատվել: Քոլեջում իրականացվել են ՄԿԾ-ների որոշ բարելավումներ՝ կապված ընտրովի և նախասիրական առարկաների ներդրման, գործնական ժամերի ավելացման, պրակտիկաների գնահատման հետ, ուր իրենց մասնակցությունն են ունեցել գործատուները, որոշ դեպքերում էլ՝ դասախոսները:

Քոլեջը անհրաժեշտ դասախոսական անձնակազմին ընտրում և աշխատանքի է ընդունում մրցութային կարգով: Դասախոսական կազմի մեծ մասը հիմնական աշխատողներ են, վերջին տարիներին ավելացել են երիտասարդ դասավանդողները: Քոլեջը կանոնակարգված օժանդակություն է ցուցաբերում նոր ընդունված դասախոսներին «Սկսնակների դպրոց»-ի միջոցով:

Քոլեջն իրաականացնելում է 4 տեխնոլոգիական մասնագիտություն, սակայն չունի արտադրությունից ներգրավված դասավանդողներ՝ 60-ից միայն մեկն է գործատու-դասավանդող:

Առկա է լսարանային ֆոնդի սակավություն, ոչ պատշաճ կահավորում, լաբորատորիաներում անհրաժեշտ սարքավորումների, պարագաների պակաս: Լսարանների սակավությունը դժվարություններ է առաջացնում լրացուցիչ, խորհրդատվական, հետազոտական բնույթի աշխատանքներ կատարելու ընթացքում, տեխնոլոգիական մասնագիտությունների գծով գործնական պարապմունքները կազմակերպվում են 1 լաբորատորիայում՝ սակավ գույքով և ռեսուրսներով: Թեև 2017-2022թթ. ՌԾ-ով նախատեսված է կաթի և կաթնամթերքի լաբորտորիայի, գինեդարանի, լաբորատորիաների վերազինում, կաբինետ-լաբորատորիաների անհարժեշտ գույքով, նյութերով ապահովում, մարզադահլիճի վերանորոգում, սակայն ՌԾ-ի ավարտման փուլում այս նպատակները դեռևս չեն իրագործվել:

Առկա են հիմնարար խնդիրներ և ռիսկեր որակավորումների արժանահավատ շնորվման տեսանկյունից, սակայն առաջխաղացման միտումներ և օրինակներ առկա են:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

Քոլեջի առաքելությանը համահունչ է Որակավորումների ազգային շրջանակին, սահմանած նպատակներն ու խնդիրներն ընդհանուր առմամբ արտացոլում են շահակիցների կարիքները:
Քոլեջում չի գործում ռազմավարական կառավարման մշակույթը: ՌԾ-ով սահմանված գործողությունները և բարելավմանն ուղղված միջոցառումներն ու մեխանիզմները մեծ մասով չեն իրականացվել: ՄՈՒՀ-ը չի իրականացնում ՌԾ-ի իրականացման արդյունավետության գնահատում, հետևաբար չեն վերլուծվում ՌԾ-ի նպատակների չիրականացման պատճառահետևանքային կապերը:
Քոլեջը կառավարման խորհրդի քննարկմանն է ներկայացվում միայն ֆինանսական հաշվետվություններ: Քոլեջի միջնաժամկետ և կարճաժամկետ պլանները չունեն կատարման արդյունքների վերաբերյալ քանակական և որակական վերլուծություններ: Առկա են տարեկան աշխատանքային պլաններ և հաշվետվություններ, սակայն դրանք ևս քանակական և որակական վերլուծությունների ամփոփումներ չեն պարունակում:
Քոլեջում առկա է ռիսկերի կանխատեսման և կառավարման խնդիր:
Քոլեջը մշակել է ՈՆԱ գործընթացները կանոնակարգող փաստաթղթեր, սակայն ՈՆԱ գործընթացների բարելավման շարունակական քայլերը հաճախ մնում են պլանավորման փուլում: Թեև ՈՆԱ կառույցում առկա են մեկ տարվա կտրվածքով տարբեր հարցումների փաթեթներ, սակայն հարցումների վերլուծության արդյունքում տեսանելի չեն վերհանված խոշոր թիրախային խնդիրները:
Որակի ապահովման այլ մեխանիզմներ դեռևս չեն գործարկվում:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.***

2017-2022թթ. ՌԾ-ով առանձնացված են քոլեջի նորարարական, գիտահետազոտական ուղղությունները: Առկա է նաև 2017-2022թթ. հետազոտական աշխատանքների ռազմավարական ծրագիր, սակայն այդ 2 ռազմավարական ծրագրերը համահունչ չեն: Թեև որոշ դասախոսներ կատարել են մշակումներ, ուր առկա է հետազոտական բաղադրիչ, սակայն տպագրված ուսումնական ձեռնարկների, գիտահետազոտական աշխատանքների որոշակի քանակ ապահովվել է մինչև 2012թ.-ը, վերջին տարիների կտրվածքով առկա է ընդամենը 2 հրապարակում՝ 2017թ. և 2021թ.-ին:
Քոլեջում գործող տեխնոլոգիական մասնագիտությունների գծով հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսները բացակայում են: Տեսանելի չէ հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածությունը:

Քոլեջը իր 2017-2022 թթ. ՌԾ-ում կարևորում է միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծումը, սակայն ունենալով միջազգային համագործակցության փորձառություն, հնարավոր չի եղել գեներացնել առկա դրական փորձը: 2018թ.-ին քոլեջում հաստատվել է արտաքին կապերի և միջազգայնացման քաղաքականությունը, առկա է արտասահմանյան երկրների ուսումնական հաստատություններում պրակտիկաների անցկացման ընթացակարգ: 2022թ.-ից քոլեջը փորձում է գործուն քայլեր իրականացնել միջազգային համագործակցության նոր ճանապարհներ գտնելու ուղղությամբ: Առկա են տեղական կառույցների հետ կնքված պայմանագրեր, որոնց մեծ մասը վերաբերում է պրակտիկաների կազմակերպմանը:
Քոլեջը վերջին տարիներին ուսանողների թվաքանակի դինամիկ աճ է ապահովել, առկա են ուսանողների հավաքագրման գործուն մեխանիզմներ: Ներդրված են ուսանողների կարիքների վերհանման և իրավունքների պաշտպանության որոշակի մեխանիզմներ, ուսանողները ստանում են լրացուցիչ խորհրդատվություններ, կարիերայի ուղղորդում: Մեծ է նաև աշխատող ուսանողների թիվը:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Ենթակառուցվածք և ռեսուրսներ» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,
3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - նախապես հավաքագրված և վերլուծված տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը,
   - տեխնոլոգիական մասնագիտությունների գծով արտադրությունից գործատու-դասախոսների ներգրավմանը,
   - դասախոսական կազմի դասավանդման արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմների կիրառմանը,
   - գործատու-գործընկերների հետ համագործակցությանը՝ նրանց ռեսուրսները համատեղ հետազոտական նպատակներով օգտագործելու համար,
   - հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը, գործնական հմտությունների ձևավորմանը,

- ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը,
- ներքին և արտաքին շահակիցների նկատմամբ հաշվետվողականության համակարգի բարելավմանը,
- որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացմանը, քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2023 թ. ապրիլի 28
ք.Երևան